

Վ. Խ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ, Հայ լեզվաբանությունը սովետական շրջանում (Համառոտ տեսություն և մատենագիտական ցանկ), ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի սեկտոր, Երևան, 1981, 104 էջ:

Մինչև օրն ապարելում չկար սովետահայ լեզվաբանության անցած 60 տարիները ներկայացնող շատ թե՛ թիշ ամբողջական մի մատենագիտություն: Վ. Ալեքսանյանի «Հայ լեզվաբանությունը սովետական շրջանում» մատենագիտական ցանկը, կարծես, դալիս է լրացնելու այս բացը: Այդ աշխատության հրատարակումն արդեն իսկ դրական երևույթ է, քանի որ հարկեղած դեպքում դրանից կարելի է քաղել որոշ տեղեկատվություն այդ բնագավառի վերաբերյալ: Իստի, մտահղացումը գովելի է, ցանկի լույս ընծայումը ընդհանուր առմամբ դրական երևույթ, սակայն տեսնենք, թե ինչպես է այդ մտահղացումն իրականացվել, ինչպես է ներկայանում մեզ հայ լեզվաբանությունն այդ մատենագիտության մեջ:

Հայ լեզվաբանությունը սովետական շրջանում վերնագիրը, կարծես, որոշումի ասում է՝ որ ցանկում պետք է զետեղված լինի սովետական շրջանում ստեղծված հայ լեզվաբանական գրականությունը: Սակայն ճայ լեզվաբանությունը բավական առաճապական հասկացություն է և մատենագիտական ցանկ կազմելիս մատենագետին որոշ դավաբանությունների առջև կարող է կանգնեցնել: Ըստ դարավոր ավանդույթի, հայ լեզվաբանությունն ասելով նախ պետք է հասկանալ հայերեն գրված լեզվաբանական գրականություն, բայց հայտնի փաստ է, որ նոր շրջանի հայ լեզվաբանների մի մասը գրում և ստեղծագործում է ռուսերեն, մի մասն էլ՝ թե՛ հայերեն, թե՛ ռուսերեն: Ուրեմն, հայ լեզվաբանություն վերնագրի տակ հարկ է նկատի առնել առավելապես հայ լեզվաբանների ստեղծած լեզվաբանական գրականությունը: Մատենագետներ էլ կան, որ անհրաժեշտ են համարում այս բնագավառը ներմուծել նաև հայոց լեզվի վերաբերյալ օտարների ստեղծած գրականությունը: Արդ, ի՞նչ կողմնորոշում է ունեցել ներկայացնելի կազմողը՝ նա գրում է. «...կաղմել ենք վերջին վեց տասնամյակում լույս տեսած հայ լեզվաբանական աշխատությունների, ինչպես նաև գիտական նշանակություն ունեցող առավել կարևոր և ծավալուն հոգվածների մատենագիտությունը» (էջ 28): Կազմողի այս ցուցումը բնավ պատասխան չի տալիս վերոհիշյալ հարցերին, ավելին, նոր շփոթ է առաջ բերում: Ըստ նրա գրածի, ցանկում ընդգրկված են ոչ թե՛ հայ լեզվաբանական, այլ հայագիտական աշխատություններ, այսինքն՝ հայերի, Հայաստանի, նրա պատմության, հայոց լեզվի, գրականության, մշակույթի վերաբերյալ եղած գրականությունը: Ուրեմն, ինչով պիտի առաջնորդվի ընթերցողը, ցանկի վերնագրով, թե՛ առաջարանով, ի՞նչ գրականություն կարելի է որոնել այդ ցանկում: Այնտեղ իրականում տեղ են գտել հայ լեզվաբանների հայերեն և ռուսերեն լեզվաբանական աշխատությունները, այլադրիների ստեղծած և հայերեն թարգմանված, նաև հայերեն չթարգմանված, վերջապես այլ լեզուներից ռուսերեն թարգմանված գրականությունը:

Այսպիսով, ցանկի վերնագիրը և առաջարանը բնավ պատկերացում չեն տալիս նրանում իրոք տեղ գտած գրականության բնույթի մասին:

Առաջարանից տեղեկանում ենք, որ ցանկում ընդգրկված են և՛ գրքեր, և՛ հոգվածներ, և որ մատենագիտությունը լիակատար լինելու հավանություն ունի: Սակայն մի շարք հարցեր մնացել են անպատասխան: Օրինակ՝ չի ասվում, ընդգրկված է միայն տպագրի, թե՛ նաև ձեռագիր գրականություն: Պարզվում է, որ ցանկում զետեղված են նաև ձեռագիր նյութեր (օրինակ՝ Ավթառի դիւլյան Վ. Ա., Գոյականների հոլովման պատմական զարգացումը հայերենում (թեկն. դիսերտացիա), Երևան, 1955)*: Կամ՝ առաջարանում չի ասվում, թե ի՞նչ հոգվածներ են ընդգրկված՝ միայն ամսագրային, թե՛ նաև լրագրային: Ցանկի քննությունը ցույց է տալիս, որ այնտեղ լրագրային ընդամենը երկու հոգված է զետեղված (Սեւակ Գ. Գ., Սերունդների կոփը քերականության բնագավառում, «Կուլտուրական ֆրոնտ», 1934, № 33, 34: Մալխասյան Ստ., Լեզվային հարցեր, «Մարտակոչ», 1924): Եթե այս երկու նյութը զանց առնենք, ապա պիտի ասենք, որ ցանկում պարբերական մամուլից զետեղված են միայն ամսագրային հոգվածներ: Մեթոդական նյութերի ընտրության աղթիվ կազմողը գրում է. «Դրանց մի մասը, որոշ հանգամանքներ նկատի ունենալով, մատենագիտության մեջ չենք տվել» (էջ 29): Ի՞նչ հանգամանքներ: Մնում է անհայտ: Միաժամանակ, ցանկում տեղ է գտել այնպիսի նյութ, որը բնավ չի առնչվում լեզվաբանական գրականության հետ (օրինակ՝ Վարդան-

* Նյութերի նկարագրությունների մեջ բերումները տրված են ըստ ցանկի:

յան Ա. Ու., Հովակիմյան Վ. Կ., Հրաժեշտ «Այբբենարանին» (գրական-մանկավար-
ժական մոտեցում), Երևան, 1969—1971)։

Գրախոսվող ցանկում զետեղված նյութերը համեմատելով Երևանի պետական համալսա-
րանի և ՀՍՍՀ ԳԱ հրատարակությունների մատենագիտությունների հետ՝ պարզվում է, որ այդ
մատենագիտությունների մեջ եղած շուրջ 300 սովետահայ լեզվաբանական նյութ (գրքեր, հոգ-
վածներ, գրախոսություններ) տեղ չեն գտել այս ցանկում։ Հենց միայն այս իրողությունը
ցույց է տալիս, որ խնդրո առարկա ցանկը ոչ միայն հեռու է լիակատար լինելուց, այլև վերա-
պահումը կարելի է կիսակատար համարել։ Հարյուրավոր բացթողմաներից նշենք մատե-
նագիտության մեջ տեղ չգտած մի քանի գիրք, որոնք համեմայն դեպք երկրորդական չեն սո-
վետահայ լեզվաբանության մեջ։ Արեգյան Մ., Գրաբարի քերականություն, Երևան, 1936;
Ղարիբյան Ա., Համառոտություն հայ բարբառագիտության, Երևան, 1941։ Աղա-
յան է. գ., Հնդհանուր լեզվաբանության գասերթաց, Երևան, 1947։ Джаукян Г.,
Урартский и индоевропейские языки, Ереван, 1963. Атаян Э., Понятия эле-
ментарной синтаксической структуры, Ереван, 1964. Джаукян Г., Хайасский
язык и его отношение к индоевропейским языкам, Ереван, 1964. Джаукян Г.,
Взаимоотношение индоевропейских, хурритско-урартских и кавказских языков, Ереван,
1967. Атаян Э., Предмет и основные понятия структурального синтаксиса, Ереван,
1968. Аветян Э., Природа лингвистического знака, Ереван, 1968. Իշխանյան Ռ.,
Տերյանի լեզվական արվեստը, Երևան, 1973։ Ավագյան Ս., Վիժական արձանագրություն-
ների հնչյունաբանություն (X—XIV դդ.), Երևան, 1973։ Սուքիասյան Ա., Գալստ-
յան Ս., Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Երևան, 1975։ Պապոյան Ա.,
Չափածոյի լեզվական արվեստի հարցեր. Համո Սահյան, Վահագն Դավթյան, Երևան, 1976։
Джаукян Г., Общее и армянское языкознание, Ереван, 1978. «Հանրալեզվաբանա-
կան, հոգնալեզվաբանական և համեմատալեզվաբանական հետազոտություններ», Երևան, 1979։
Мурадян А., Системы индикатива французского и армянского языков и их со-
поставительный анализ, Ереван, 1979. Քոսյան Վ., Գրաբարի բառակապակցություն-
ները, Երևան, 1980 և այլն։

Այժմ դառնանք այն խնդրին, թե ներկա մատենագիտության մեջ ինչպես են բնութագրված
նյութերը։ Նախ՝ ցանկը ժանոթագրված է։ Սա արդեն իսկ էական թերություն է։ Ժամանակա-
կից գիտական տեղեկատվությունը ոչ միայն մասնագետին ցույց է տալիս տվյալ բնագավառի
գրականությունը, այլև, նախապես որոշակի տեղեկությունների հաղորդելով յուրաքանչյուր աշ-
խատության բովանդակության մասին, օգտվողին ազատում է ավելորդ ընթերցումներից։ Ցան-
կի մի շարք նյութեր ժանոթագրված չլինելու պատճառով զգալիպես արժեքազրկվում են։
Նման նյութերն ավելի շատ հարցերի տեղիք են տալիս, քան որևէ տեղեկություն են հաղորդում
(օրինակ՝ Ղազարյան Ս. Ղ., Բազմավաստակ հայագետը, Երևանի համալսարանի «Գի-
տական աշխատություններ», հատոր 42, Երևան, 1954։ Կամ՝ Միսառյան Ն. Գ., Ար-
ձակագրի լեզուն, ՇՍՍՀԽՍՀ-ի գրականություն, 1972, № 6)։ Ո՞ր հայագետի մասին է խոսքը
կամ ո՞ր արձակագրի լեզուն է նշվում, մենք էլ անպատասխան։

Դառնանք նյութերի նկարագրության խնդրին։ «Հայ լեզվաբանությունը սովետական շրջա-
նում» մատենագիտական ցանկի նյութերի նկարագրությունները բացարձակապես չեն բավարա-
րում մատենագիտական նկարագրությանը ներկայացվող հիմնական պահանջներին, այն է՝
նշարկություն, լիակատարություն և միօրինակություն։ Ցանկում հաճախ են հանդիպում ոչ
նշարկոտ, ներկայացվող նյութն անճիշտ բնութագրող նկարագրություններ։ Այսպես՝ ա) նկա-
րագրության մեջ մեքենայորեն կրկնվում են գրքի տիտղոսաթերթում տեղ գտած անճշտություն-
ները (օրինակ՝ «Հայկական կոնստանտինոպոլի միջազգային լեզվաբանության գնահատմամբ»
(հետադարձ տեղեկատու, առաջարկներ Ա. Ղարիբյանի), Երևան, 1976)։ Այս նյութի ամբողջ
տեքստը ուսումնեն է, ուստի պետք է նկարագրվեր ուսումնեն, այպա՝ այն ոչ մի աղբյուր չունի
տեղեկատուի հետ, դա հոգվածների ժողովածու է՝ «Вопросы языкознания» ամսագրի էջե-
րում 1959—1963 թթ. ընթացքում հայկական կոնստանտինոպոլի շուրջը ծավալված բանավեճին
վերաբերող հոդվածների նմանահանություն։ բ) Ճիշտ չի տրվում նկարագրվող նյութի հասցեն
(օրինակ՝ Ղափանցյան Գ. Ա., Լեզվի և նրա դիալեկտիկական զարգացման շուրջը։
Առանձնատիպ, 1944)։ Պետք է լինի՝ «Նոր ուղի», 1931, № 5, էջ 107—141։ Առհասարակ մա-
տենագետը պարտավոր է նշել, թե առանձնատիպը ո՞ր ամսագրի, ո՞ր թվի, ո՞ր համարի է։
գ) Ճիշտ չի տրվում նյութի վերնագիրը (օրինակ՝ «Լեզվաբանության հարցեր», Երևան, 1952)։

Պետք է լինի՝ «Լեզվաբանության հարցերը Ի. Վ. Ստալինի աշխատությունների լույսի տակ»»
 դ) Ճիշտ չի տրվում հրատարակության տարեթիվը (օրինակ՝ «Հայոց լեզվի պատմական բերականություն», հատ. 1—2, Երևան, 1975)։ 1975 թ. լույս է տեսել միայն 2-րդ հատորը և) Ճիշտ չեն տրվում հեղինակային տվյալները (օրինակ՝ հաշիկյան Լ. Ս., Ավագյան Ս. Ա., «Յովհաննէս Փռնեցի, Յաղաքս քերականի», Երևան, 1977)։ Այս գրքի հեղինակը Հովհաննէս Փռնեցին է, Լ. հաշիկյանը Հովհաննէս Փռնեցու «Յաղաքս քերականի» աշխատության բնագիրը հրատարակության է պատրաստել, իսկ Ս. Ավագյանը Լ. հաշիկյանի հետ միասին ներածություն է գրել։ ղ) Մատենագիտության մեջ կարևոր օրենք է. յուրաքանչյուր նյութ նկարագրել հրատարակության լեզվով։ Ներկա ցանկում մի շարք նյութեր նկարագրված են հայերեն, իբրև հայերեն հրատարակություններ (օրինակ՝ Ավետյան Է., Լեզվի գոյարանական արձատները, «Բանբեր Երևանի համալսարանի», 1977, № 1)։ Իրականում հոգևածր տպված է ուսերեն։ Այս կերպ են նկարագրված ցանկի նաև հետևյալ համարների տուկ ներկայացված նյութերը. № 214, 215, 218, 268, 269, 270, 351, 352, 354, 362, 408, 426, 535, 728, 825, 868, 870, 880, 881, 953, 1010, 1138—1147, 1202, 1207, 1252, 1288 և այլն։ է) Ի վերջո, կազմող տեղեկություններ է հայտնում գոյություն չունեցող հրատարակությունների մասին։ Այսպես. ըստ ցանկի 1972 թ. հրատարակվել է մի ինչ-որ «Անկարկներ միջին դարան հայերենի պատմության» գիրք և նույն 1972 թ. հրատարակվել է «Անկարկներ միջին դարան հայերենի պատմության» առաջին հատորը (№ 76, 77)։ Կամ՝ ստացվում է, որ 1926—1935 թթ. հրատարակվել է Հր. Աճառյանի «Հայերեն արձատական բառարանը» և 1927—1930 թթ., դրեթն նույն ժամանակաընթացում հրատարակվել է նույն Հր. Աճառյանի մի այլ «Արձատական բառարան» և երկուսն էլ վերահրատարակվել են. մեկը՝ 1971—1979 թթ., և մյուսը՝ 1971—1980 թթ. (№ 120, 129)։ Սրա պատճառն այն է, որ խախտված է մատենագիտական նկարագրության ամենակարևոր սկզբունքներից մեկը՝ de visu-ի (նյութից նկարագրելու) սկզբունքը։

Գրախոսվող ցանկում անտեսված են մատենագիտական նկարագրության այնպիսի պատարագիր տարրեր, ինչպիսիք են էջերի քանակը, հրատարակությունների նշումը, Հստակ տեղեկություններ չեն տրվում բազմահատոր հրատարակությունների մասին (օրինակ՝ Աճառյան Զ. Զ., Լիակատար քերականություն հայոց լեզվի (համեմատությամբ 562 լեզուների), հատ. 1—6, Երևան, 1952—1971)։ Ո՞ր թվականին է լույս տեսել այս գրքի, ասենք, 3-րդ հատորը, հնարավոր չէ պարզել։ Աղոտ են տեղեկությունները վերահրատարակված գրքերի մասին (օրինակ՝ Ավագյան Է. Բ. և Բարսեղյան Զ. Խ., Հայոց լեզու Դասագիրք 5—7-րդ դասարանների համար, Երևան, 1965—1980)։ Փանի՝ հրատարակություն է ունեցել այս գիրքը, պարզ չէ։ Քերի է հայտնվում հոգևածի հասցեն (օրինակ՝ Марр Н. Я., Матеріалы по хемшискому наречию армянского языка, ЗКВ, 1925)։ Մատենագիտական նկարագրություններում չի կարելի օգտագործել նույնիսկ ամենահայտնի հապավումներ առանց դրանք բացելու, որ մնաց ЗКВ հապավումը։ Շատ դեպքերում չի հայտնվում հանդեսի կամ լրագրի համարը (օրինակ՝ Բեդիրյան Պ. Ս., Բառային ստուգաբանություններ (սեկեք ստուգաբաններ), «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում» (1965—1980 թթ. տարբեր համարներ)։ Մալխասյան Ս. Ս., Լեզվային հարցեր, «Արտակոչ», 1924)։

Մատենագիտությունում մեծ թիվ են կազմում վրիպակները, որոնք նույնպես արժեքազրկում են այն։ Օրինակ՝ № 13-ում՝ ամսագրի № 12-ի փոխարեն տպվել է № 11, № 308-ում՝ 1976-ի փոխարեն տպվել է 1973, № 352-ում՝ 1976-ի փոխարեն՝ 1978, № 845-ում՝ 1964-ի փոխարեն՝ 1944, № 947—ամսագրի № 4-ի փոխարեն № 3 և այլն։

Դառնանք մատենագիտության կառուցվածքի խնդրին։ Նյութը խմբավորված է այբբենական կարգով, իսկ մատենագիտական ցանկին կից տրված է օժանդակ՝ թեմատիկ ցանկ, պատճառաբանով։ Թե այդ ակզրումըքը ենպատակահարմար է դժվարություններից և որոշ կարծեցյալ «միտումներից» խուսափելու համար» (էջ 28)։ Այդպես էլ չկռահելով, թե ի՞նչ օգտվարություններ և ի՞նչ «կարծեցյալ միտումներ» կարող են լինել, մի պահ ընդունենք, թե իրոք այդպիսիք եղել են։ Բայց մի՞թե մատենագիտություն կազմողը պետք է շրջանցի դրանք և ոչ թե հաղթահարելով դժվարությունները՝ ընթերցողին ներկայացնի մի այնպիսի ցանկ, որից նա կարողանա օգտվել առավել արդյունավետ և արագ։

Մյուս կողմից, նյութի զուտ այբբենական խմբավորմամբ արհեստական դժվարություններ են ասեղծվել թե՛ կազմողի և թե՛ ընթերցողի համար։ Ցանկի այս կառուցվածքի պատճառով չի կազմվել անվանացանկ, իսկ դա մեծ թվով կրկնությունների և բացթողումների պատճառ է

դարձել: Այսպես՝ նպատակ ունենալով յուրաքանչյուր հեղինակի շարքում ընդգրկել նրա բոլոր գործերը, կազմողը ստիպված է եղել զետեղել բազմաթիվ հոդվածներ զանազան ժողովածուներից, միաժամանակ տալով նաև ժողովածուների նկարագրությունները: Կան մեծ թվով աշխատություններ ու հոդվածներ, որոնք գրվել են երկու և ավելի հեղինակների կողմից: Դրանք, բնականաբար, զետեղված են առաջին հեղինակի շարքում և որովհետև մյուս հեղինակներից ուղղակիում համապատասխան հղումներ չեն արված, ապա այս կարգի նյութերից օգտվելու համար հաճախ ընթերցողը ստիպված է մեկ առ մեկ նայել ցանկի բոլոր նյութերը: Անուհետև, ծանի որ տվյալ կառուցվածքի դեպքում նկարագրության սկզբունքը նյութը հեղինակի ազգանվան տակ նկարագրելն է, մի շարք բազմահատոր հրատարակություններ, որոնց տարբեր հատորները տարբեր հեղինակներ են գրել, հայտնվում են տարբեր տեղերում, այսինքն աղճատվում է այդ հրատարակությունների ամբողջականությունը:

Անվանացանկի բացակայության պատճառով ստվերի տակ են մնացել այն հեղինակները, որոնք նշվում են վերնագրից հետո (կազմող, աշխատասիրող, խմբագրող և այլն): Հնարավոր է գտնել այն նյութերը, որոնք տվյալ անձնավորության մասին են կամ այս կամ այն շահով առնչվում են նրա անվան հետ: Մինչդեռ, նյութի այլ խմբավորման և անվանացանկի զետեղման շնորհիվ այս կարգի դժվարությունները լուծված կլինեին:

Մատենագիտական սխալներ վաղուց ի վեր ջուլջուլ է տվել, որ համեմատաբար մեծ ընդգրկում ունեցող, առավել ևս ճյուղային մատենագիտական ցանկերի համար այբբենական խմբավորումն ամենամասշտաբային հարմարն է: Այն հիմնականում կիրառվում է նեղ բնույթի, մեկ հարցի վերաբերող և կենսամատենագիտական ցանկերում: Ներկա մատենագիտական ցանկը մեկ անգամ ևս արձանագրում է այս իրողությունը:

Այսպիսով, եթե ի մի բերենք մեր ասածը «Հայ լեզվաբանությունը սովետական շրջանում» մատենագիտության մասին, պետք է նշենք, որ այն չի բավարարում այսօրվա ճյուղային հետադարձ մատենագիտական ցանկերին առաջադրվող պահանջները, և 1920—1980 թթ. հայ լեզվաբանական մատենագիտություն ունենալու խնդիրն այս ցանկի հրատարակումով չի կարելի լուծված համարել:

ԱՆԱՀԻՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ